դիմաւորող ժողովրդեանն օրհնելով յաջողութեամբ ժամանեց Ղազախ, ուր ի՛ջևանեց պ. գաւառապետի տանը։

Ղազախում Վեհափառ Հայրապետին դիմաւորելու համար մեծ բազմութիւն էր հաւաքուած. այդ տեղ էին շատ պատգամաւորներ ու քահանաներ Գանձակից իրանց յաջորդ բարեշն. Գարեգին վարդապետի առաջնորդութեամբ, պատուաւոր քաղաքացիներ, դպրոցների հոգաբարձուներ և դարձեալ մերձակայ գիւղերից շատ ժողովրդականներ։

Դեկտեմբերի 27-ին, երեքշաբթի օրը, առաւօտեան Նորին Վեհափառութիւնը ահագին բազմութեան ուղեկցութեամբ ժամանեց Աղստաֆա կայարանը, որտեղ նոյնպէս զանազան տեղերից եկած ժողովուած էին խումբ խումբ պատգամաւորութիւններ և առ հասարակ Նորին Օծութեան քաղցր տեսութեանն արժանանալու փափագողներ։ Այդտեղ էին Վեհափառ Հայրապետի յատուկ հրամանով Շուշուց կանչուած բարեշնորհ Նահապետ վարդապետը, այլ և Ղարաբաղի թեմական դպրանոցի տեսչի պաշտօնակատար պ. Սա. Կանայեանցը և այլք։ Մեծ պ. Առաքել Ծատուրեանը մի ձոն նախաճաշի սեղան էր պատրաստել արուել այդտեղ ի պատիւ Նորին Վեհափառութեան։ Սեղանի վրայ Նորին Ս. Օծութիւնը օրհնեց ընդ առաջ եկած բոլոր պատգամաւորներին և յատկապէս պ. Ա. Ծատուրեան իւր հիւրասիրութեան համար։

Նախաճաշից յետոյ, մօտաւորապէս առաւօտեան 11 ժամին, Վեհափառ Հայրապետը մեկնեց դէպի Տփխիս իւր համար յատկապէս պատրաստուած արտակարգ գնացքով, որի մասին հոգացել էր Տփխիսում Նորին Սրբութեան ընդունելութեան համար կազմուած առանձին յանձնաժողովը մեծ. պ. Ա. Անանեանի նախագահութեամբ։ Ճանապարհ ձգող բազմութեան միահամուռ «կեցցէ՛ Հայրիկ» բարձրագոչ աղաղակը օդը թնդացրեց ...։

Գրէթէ ժամի 2-ին դէնի կէս աւուր Հայրապետական գնացքը կանգ առաւ Տփխիսի կայարանում, ուր արդէն, ինչպէս ասում են, սեղ ձգելու տեղ չկար, այնքան մեծ էր Նորին Սրբութեանին առաջ եկած բազմութիւնը։ Կայարանից մինչև առաջնորդարան, որ առաջուց պատրաստուած էր Նորին Վեհափառութեան իջնելու համար, կառքերի մի անընդհատ շարք հեռաւում էր Հայրապետական կառքին. բոլոր փողոցները հեղեղուած էին ժողովրդեան յոգնախառն բազմութեամբ, որ ցնծագին աղաղակով և որոտընդոստ «կեցցէ՛»-ներով իւր անսահման սէրն էր արտայայտում իւր պաշտելի Հայրիկին։

Վանքի մայր եկեղեցու գաւիթը մինչև երեկոյ լի էր բազմութեամբ. «կեցցէ՛»-ների ձայնը չէր դադարում։ Մուտն ընկնելուց բակը լուսաւորուեցաւ ամենաշքեղ կերպով. խիստ փառաւոր ճրագալոյց և հրախաղութիւն էր պատրաստուած ի պատիւ Նորին Վեհափառութեան գալստեան։

Յաջորդ օրուանից սկսուեցան Վեհափառ Հայրապետի ընդունելութիւնները բարձրաստիճան և պատուաւոր անձանց, այլ և բազմաթիւ պատգամաւորու թեանց։

Նոր տարու և Ծննդեան ու Մկրտութեան տօներն այս տարի Տփխիսի հայերի համար մի անսովոր հանդիսաւորութեամբ անցան շնորհիւ Նորին Վեհափառութեան ներկայութեան, որ մանաւանդ մեծապէս մխիթարեց Իւր Տփխիսի հօտին՝ Անձամբ խաչը ջուրը ձգելով Փրկչի Ս. Մկրտութեան օրը։

Զարմանալի շքեղութեամբ տօնուեցաւ Տփխիսում նաև Վեհափառ Հայրապետի անուանակոչութեան տօնը, յունուարի 14-ին, երբ ի նշան Իւր գոհունակութեան Տփխիսի թեմական առաջնորդ Գեր. Գէորգ եպիսկոպոսին արքեպիսկոպոսութեան պատիւը շնորհեց։

ՄԱՅՐ ԱԹՈՌ.

Յունուարի 1-ին նոր տարու առթիւ Նորին Վեհափառութեանը Մայր Աթոռի միաբանութեան կողմից Գերապատիւ Տեղապահ Տ. Մեսրովբ Արքեպիսկոպոսի հեռագրով ուղարկած շնորհաւորութեանը ազգիս Վեհափառ Հայրապետը պատասխանել է հետևեալ հեռագրով.

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ.

ՄԵՍՐՈՎԲ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Ընդունեցինք միաբանութեան շնորհաւորութիւնը։ Օրհնում ենք ամենքին հայցելով Ս. Հոգւոյ շնորհքը նոր տարու առթիւ, որպէս զի իւրաքանչիւրն ըստ իւր աստիճանի

*

եռանդով կատարէ իւր եկեղեցական պարտաւորութիւններն ի փառս Աստուծոյ։

ՄԿՐՏԻՉ ԿԵԹՈՒՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ.

Գերապատիւ Տ. Տեղապահ Մեսրովբ Սրբազան Արքեպիսկոպոսը շնորհաւորել էր Նորին Վեհափառութեան նոր տարին հետևեալ հեռագրով.

ՏՓԽԻՍ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ
ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Ս. Էջմիածնի միաբանութիւնը որդիական անկեղծ զգացմունքով՝ սրտանց մաղթում է ի համբոյր Ձերդ Սրբութեան Աջին, խնդրելով Ամենակարողն Աստծուց պարգևել իւր սիրեցեալ Հայրապետին երկար կեանք ի փառս Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ։

Յունուարի 6-ին Գեր. Տ. Տեղապահը, Սրբազան Մեսրովբ Արքեպիսկոպոսն հետևեալ հեռագիրն է ուղղել Նորին Օծութեանը.

ՏՓԽԻՍ. ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԱՆ
ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Մայր Աթոռի միաբանութիւնը Փրկչի Ծննդեան տօնի օրը որդիական խոնարհութեամբ մաղթում է ի համբոյր Ձերդ Սրբութեան Աջին, խնդրելով իւր աննման Հօր օրհնութիւնը։

—

Նորին Օծութեան անուանակոչութեան տօնի օրը, յունուարի 14-ին, Գեր. Տ. Մեսրովբ Արքեպիսկոպոսը հեռագրել է աղջիս Վեհափառ Հայրապետին.

ՏՓԽԻՍ. ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ
ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Ձերդ Սրբութեան անուանակոչութեան հանդիսաւոր օրը Ձեր խոնարհ ծառան Մայր Աթոռի միաբանութեան և բազմաթիւ ժողովրդեան հետ միասին ս. պատարագից յետոյ ջերմ աղօթքներ վերառաքեց առ Բարձրեալն՝ Հայ ազգի սիրեցեալ Հայրիկիդ արևշատութեան համար։ Ծնկաչոք խնդրում ենք կարօտով Ձեր Հայրական օրհնութիւնը։

—

Դեկտեմբերի 31-ին, երեկոյեան ընթրիքի ժամուն Մայր Աթոռի միաբանութիւնը և ճեմարանի աշակերտները իրանց դաստիարակների հետ միասին համախմբուած էին միաբանութեան սեղանատանը կաղանդի օրը դիմաւորելու համար։ Ամենապատիւ Տ. Տեղապահ Մեսրովբ Սրբազան Արքեպիսկոպոսը խիստ ոգևորութեամբ մի ճառ խօսեց՝ առաջարկելով Նորին Վեհափառութեան աղջիս Հայրապետի կենաց բաժակը, որ բուռն կեցցէներով ընդունուեցաւ բազմականների կողմից։ Ընթրիքը շատ ուրախ անցաւ. առաջարկուեցան նաև Ս. Էջմիածնի հաստատութեան և Մայր Աթոռի միաբանութեան կենացները. մի բան միայն տրտմեցնում էր ամենքին. որ անջատուած են իրանց պաշտելի Հայրապետից։

Նոյն երեկոյեան հանդէս կար նաև ճեմարանում ուր պ. տեսուչն և ամբողջ ուսուցչական խումբը նոր տարին աշակերտների հետ միասին դիմաւորեցին։

—

Ամենաշքեղ կերպով տօնուեցաւ թէ վանքում և թէ ճեմարանում Նորին Վեհափառութեան անուանակոչութեան տօնի օրը, յունուարի 14-ին։ Ցերեկը մի ճոխ ճաշկերոյթ էր պատրաստուած վանքի սեղանատանը, ուր ներկայ էին բացի միաբանութիւնից նաև ճեմարանի ուսուցչական խումբն և աշակերտները։ Նորին Օծութեան կենաց բաժակի վրայ առենաբանութիւն արին Գեր. Մեսրովբ Արքեպիսկոպոսը, ճեմարանի ուսուցիչներից պ. Ն. Քարամեանը. իսկ բար. Գրիգոր վարդապետ Տէր Ստեփաննոսեանցն առաջարկեց Մայր Աթոռի հաստատութեան կենացը։

Ճաշի ժամանակ երգում էր ճեմարանի երգեցիկ խումբը բար. Հ. Կոմիտաս արեղայի առաջնորդութեամբ։

Երեկոյեան դեղեցիկ ճրագալոյց կար թէ վանքի զաւթում և թէ ճեմարանում որ առա-

տուանից իսկ զարդարուած էր բազմաթիւ դրօշակներով։ Ճեմարանում պատրաստուած շքեղ հանդիսին ներկայ էին Մայր Աթոռի զրեթէ բոլոր միաբանները Գեր. Մեսրոպ Սրբազան Արքեպիսկոպոսի հետ ի միասին։ Բացի աշակերտների ճառերից՝ ճեմարանի հանդիսարանում առնախօսեց Նորին Վեհափառութեան մասին ուսուցիչ պ. Մ. Բերբերեանը, իսկ պ. Յովհաննէս Յովհաննիսեանը կարդաց «Արարատ»ի սոյն համարում տպագրուած բանաստեղծութիւնը։ Հանդիսարանից ճեմարանի աշակերտներն և ուսուցչական խումբն անցան սեղանատուն, ուր հանդէսն աւելի ընտանեկան եղանակով շարունակուած զարձեալ ճառերի, ընտիր հատուածների և ոտանաւորների ընթերցանութեամբ։

Թէ այդ օրը, և թէ յունուարի 14-ին, և թէ նոր տարու և Ծննդեան տօներին ճեմարանի մեծապատիւ տեսուչ պ. Կարապետ Կոստանեան ճեմարանի կողմից շնորհաւորական հեռագրեր ուղղեց աղջիս Վեհափառ Հայրապետին։

ՁԵՌՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ըստ զրաւոր հրամանի Վեհափառ Կաթուղիկոսի աղջիս, Սրբազան Գրիգոր եպիսկոպոս Գաւնակերեանցը յունուարի 14-ին՝ Ս. Յովհաննու Մկրտչի տօնին՝ կոչում տալով Մայր Աթոռոյս միաբաններից Ռափայէլ Սարկաւագ Տէրունեանին, հետևեալ օրն 15-յունուարի ձեռնադրեց կուսակրօն քահանայ և վերակոչեց Մկրտիչ։ Ձեռնադրութիւնը, որպէս և երեկոյան վեղար տալոյ արարողութիւնը տեղի ունեցաւ զիւղի Ս. Աստուածածին եկեղեցում, ի ներկայութեան խուռն բազմութեան։



1. ՌՈՒՍԱՀԱՅՔ.[1]

Ա. Երևանի թեմ.

Երևանի թեմի առաջնորդական փոխանորդ Գերապատիւ Կիւրեղ եպիսկոպոս Սրապեանը Վեհափառ Կաթուղիկոսի հաճութեամբ ուղեկցեց Նորին Օծութեան մինչև Թիֆլիզ և այնտեղ մի ամսու չափ հայրապետանոցի գործերով զբաղուելուց յետոյ, վերադարձաւ իւր թեմը։ Կիւրեղ Սրբազանն այժմ այցելութեան է ելած իւր ընդարձակ թեմի հեռաւոր կողմերը։

Երևանի հայ հասարակութիւնը եկեղեցական վեհ հանդէսների շքեղութիւնից չը զրկելու համար՝ հայրապետական հրամանաւ ս. Ծննդեան տօներին Սինոդի անդամ Գերապատիւ Արիստակէս եպիսկոպոս Դաւթեանը գնաց Երևան և մի շաբաթ մնալուց յետոյ վերադարձաւ Մայր Աթոռս։

Բ. Վրաստանի եւ Իմերէթի թեմ.

Վեհափառ Հայրապետը հաճել է իւր անուանակոչութեան տօնին թեմիս առաջնորդ Գերապատիւ Գէորգ եպիսկոպոս Սուրէնեանցին Արքեպիսկոպոսութեան բարձր աստիճանը շնորհել։

Ահա Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը.

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ՝ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՁԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ։

Թեմական Առաջնորդին Հայոց Վրաստանի և Իմերէթի Գերապատիւ Տ. Գէորգ Սրբազան Արքեպիսկոպոսի հարազատի Մայր Աթոռոյ ողջոյն և Հայրապետական օրհնութիւն։

Բազմաժամանակեայ հաւատարիմ և անձնուէր ծառայութիւն քո առ Մայր Աթոռն Հայաստանեայց և առ սուրբ Եկեղեցին, որում կարդեալ ես տեսուչ և հովիւ բանաւոր Հօտին Քրիստոսի, արժանացեալ շնորհաց երջանկայիշատակ Նախորդացն Մերոց արժանի համարիմ Քեզ զմեծագոյն իմն շնորհաց, վաստ-

1. Ծնողրում ենք սրբազան թեմական առաջնորդներից, արժանապատիւ յաջորդներից եւ գործակալներից եկեղեցական աչքի ընկնող գործերի մասին խմբագրութեանս տեղեկութիւններ տալ, որպէս զի «Արարատի» միջոցով հնար ունենանք հաղորդելու հայ հասարակութեան։

նորոյ յաւուր տօնի Անուանակոչութեան Մերոյ շնորհեալ զՔեզ պատիւ Արքեպիսկոպոսութեան, այսու Հայրապետական կոնդակաւ Մերով զնոյն հաստատեմք։

Մաղթեմք առ Ամենակարող Հոգին Աստուած եւս առաւել զօրացուցանել զՔեզ ի պաշտամանդ, որով կարող լիցիս ժրաջան և շրջահայեաց գործունէութեամբ և հաւատարմութեամբ եւս քան զեւս յաջողիլ յասպարիզի Ազգային և Եկեղեցական գործունէութեան։

Ողջ լեր և օրհնեալ յերկնաւոր Հօրէն և ի Մէնջ։ Ամէն։

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 17 յունվարի 1895 ամի,
և յազգ. թուականութեան մերում ՌՃԽԴ
Համար 57.
Ի Ք. Տփխիս։

—

Դ. Շուշուայ թեմ.

Արժանապատիւ Նահապետ վարդապետը Հայրապետական յանձնարարութեամբ Շուշուայ թեմական դպրանոցի խառնակ գործերը կարգի բերելուց յետոյ Վեհափառ Կաթողիկոսի հրամանաւ Ազատաձայնում միացել է Նորին Օծութեան դիւանին և այժմ ղեկանուում է թիֆլիզում։

—

Դ. Շամախու թեմ.

Շամախու թեմական փոխանորդ Գերապ. Մակար եպիսկոպոս Բարխուդարեանցը ծնընդեան տօներին այցելել է Բաքու քաղաքը ժողովրդեան քարոզներով մխիթարելու համար։

—

2. ՏԱՃԿԱՀԱՅՔ

Վերջապէս կազմակերպուած է տաճկահայերի եկեղեցական վարչութիւնն այնպէս, ինչպէս ազգային սահմանադրութիւնն է կանոնել։ Այստեղ յառաջ ենք բերում բոլոր վարչական մարմինների անդամոց անուանական ցանկը։

Պատրիարք Գերապատիւ Մատթէոս Արքեպիսկոպոս Իզմիրեան։

Առենապետ ազգային ժողովի Մեծ. Գարրիել էֆ. Նորատունկեան։

Դեռատենապետ » » Մեծ. Ռէթէոս էֆ. Պէրպէրեան

Առենադպիր » » Մեծ. Յ. Ն. Մոսաիչեան

Առենադպիր » » Մեծ. Յովակիմ էֆ. Յովակիմեան

Կրօնական նորընտիր ժողովոյ անդամք

Տ. Սիմէոն Արքեպ. Սէֆէրեան
Տ. Հմայեակ Եպիսկ. Դիմաքսեան
Տ. Գրիգորիս » Ալէքսիանեան
Տ. Յակոբ Վարդապետ Աշոտ
Տ. Յովհաննէս » Արշարունի
Տ. Վահան » Յակոբեան
Տ. Գէորգ » Երեցեան
Տ. Սահակ Ա. Քհնյ. Տ. Սարգսեան
Տ. Յովհաննէս » Մկրեան
Տ. Խորէն » Փէհլիվանեան
Տ. Արիստակէս » Մամբրէեան
Տ. Վրդանէս » Պալեան
Տ. Միքայէլ » Աշճեան
Տ. Խաչատուր » Դերձակեան

Քաղաքական նորընտիր ժողովոյ անդամք

Մկրտիչ Էֆենտի Մանուկեան
Մինաս » Յովակիմեան
Տոքթոր Ս. » Սեղբոսեան
Աւետիս » Թենկրեան
Յովհաննէս » Պոյաճեան
Գառնիկ » Համբարձումեան
Սահակ » Ղազարոսեան
Յովհաննէս » Կրճիկեան
Կարապետ » Էրզնեան
Արսէն » Արսէնեան
Գրիգոր » Մսերեան
Պատրիկ » Կիւլպէնկեան
Միսակ » Գայթանճեան
Սմբատ » Քեսթիրեան

Աղդիս Վեհափառ Հայրապետը յունուարի 12-ից դրած սրբատառ կոնդակով արքեպիսկոպոսութեան բարձր աստիճանն է շնորհել Գերապատիւ պատրիարք Սրբազան Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեանին։

—

Գ. ՊԱՐՍԿԱՀԱՅՔ

Պարսկահայոց և Հնդկահայոց եկեղեցական կեանքից խմբագրութիւնս նոր տեղեկութիւններ դեռ չէ ստացել, բայց լիայոյս է, որ սրբազան առաջնորդների աջակցութեամբ այսուհետև յաճախ առիթ պէտք է ունենայ տեղեկութիւններ տալու մեր վտարանդի եղբայրների կեանքից։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ·

ԲԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՕՂԻՍ·

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1836 յանուն Յովհան վարդապետի Տէր Գրիգորեան, որով կարդէ զնա ի վանահայրութիւն Ս· Լուսաւորչայ Նախավկայի վանուց որ ի Դարաշամբ։ 24 հոկտ·

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1847 յանուն Բենիկ աբեղայի, որով կարդէ զնա թեմական տեսուչ Երևանայ, ըստ միջնորդութեան Գեր· Կիւրեղ եպիսկոպոսի, փոխանորդի թեմականին Երևանայ, հոկտ· 26·

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1844 յանուն Վահան քահանայի Տէր Գրիգորեան գործակալի Մեղրւոյ, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի կուրծս խաչ ոսկեզօծ, ըստ միջնորդութեան Գեր· Կիւրեղ Եպիսկոպոսի։ 26 հոկտ·

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1845 յանուն Գէորգ քահանայի Տէր Գրիգորեան՝ գործակալի կողմանցն Սիսիանու, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի կուրծս խաչ ոսկեզօծ, ըստ միջնորդութեան Գեր· Կիւրեղ Եպիսկոպոսի։ 26 հոկտ·

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1846 յանուն Սարգիս քահանայի Սահակեան՝ անդամոյ Հոգևոր Կառավարութեան Ցաթևու, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի կուրծս խաչ ոսկեզօծ, ըստ միջնորդութեան սրբազան Կիւրեղ Եպիսկոպոսի։ 26 հոկտ·

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1854 յանուն Սարգիս քահանայի Ազարեան՝ որ ի Նոր Բայազիտ, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի կուրծս խաչ ոսկեզօծ, ըստ միջնորդութեան Գեր· փոխ-թեմականին Երևանայ Կիւրեղ Եպիսկոպոսի։ 26 հոկտ·

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1869 յանուն Պետրոս վարդապետի Այվազեան, որով կարդէ զնա ի փոխանորդութիւն վիճակին Ախալցխայի։ 1 նոյեմ·

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 1957 յանուն Նիկողայոս քահանայի Եայլոյեանց, գործակալի կողմանցն Մեծ-Պարնոյ, որով շնորհէ նմա իրաւունս կրել ի կուրծս խաչ ոսկեզօծ, ըստ վկայութեան արժ· Աշոտ վարդապետի և ըստ միջնորդութեան Գեր· Կիւրեղ Եպիսկոպոսի։ 14 նոյեմ·

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 2005 յանուն Թովմա աբեղայի Բաղդասարեան, որով կարդէ զնա քարոզիչ Օշական գեղջ։ 17 նոյեմ·

*
* *

Կոնդակ Վեհափառ Հայրապետի համարաւ 2013 յանուն Պետրոս քահանայի Զօլախեան ի Նոր Նախիջևան, որով շնորհէ նմա իրաւունս կրել խաչ ոսկեզօծ, ըստ միջնորդութեան վիճակային Կոնսիստորիային Բեսարաբիոյ։ 18 նոյեմ·

*
* *